ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՅ-ՎԻԵՏՆԱՄԱԿԱՆ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Առևտրատնտեսական համագործակցության հարցերով հայ-վիետնամական միջկառավարական հանձնաժողովը հիմնվել է համաձայն 2012թ. հունիսի 8-ին կնքնված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Վիետնամի Սոցիալիստական Հանրապետության կառավարության միջև տնտեսական, առևտրի, գիտական և տեխնիկական համագործակցության» մասին համաձայնագրի:

Հանձնաժողովի հայկական կողմի նախագահն է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալը:

Հանձնաժողովի առաջին նիստը կայացել է 2017թ. մարտի 17-ին՝ Հանոյում: Հանձնաժողովի հերթական՝ երկրորդ նիստը նախատեսվում է անցկացնել Երևանում: